ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏԾ-23/1

« 24 » հունվարի 2023թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4 700 000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ք. Երևան 0033, Հ. Հակոբյան 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
գործառնական վարչություն,	Հ/Հ՝ 11500286323763
Հ/Հ 900011000834	ՀՎՀՀ 00001672
ՀՎՀՀ 02631263	էլ. հասցեն՝ info@mergelyan.com
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան	հեռ. 015 27 27 00
	տնօրեն՝ Ռ. Հարությունյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ

20.01.23

Հավելված N 1
«24» հունվարի 2023թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏԾ-23/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը
1	72261180/1	Հավելված 1* Հավելված 2*	դրամ	4 700 000	1	ք.Երևան, Մամիկոնյանց 46/5	Մինչև 25.12.2023թ.

Հավելված 1*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

կարճված քրեական վարույթների և չնախաձեռնված քրեական վարույթների նյութերի հաշվառման տեղեկատվական համակարգի սպասարկում, բարեփոխումների ներառում և ուղեկցում

Ձեռքբերումի ծառայությունների նկարագիր
1. ՀՀ քննչական կոմիտեի կարճված քրեական վարույթների և չնախաձեռնված քրեական վարույթի նյութերի հաշվառման տեղեկատվական բազաների վարման ծրագրային ապահովման ֆունկցիաների իրագործման ուղեկցում:
2. Դատարան ուղարկված քրեական վարույթների հաշվառումների ծրագրային ապահովման ֆունկցիաների իրագործման ուղեկցում:
3. Տվյալների բազայի արխիվացման, վերականգնման ենթահամակարգի աշխատանքի ուղեկցում:
4. Տվյալների բազաներից պահանջվող տեղեկանքների կազմման ծրագրային ենթահամակարգի ֆունկցիաների իրագործման ուղեկցում:
5. Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև մշակման և դրանց արդյունքները ծրագրերում ներառելու աշխատանքներ: Մասնավորապես կմշակվեն՝
5.ա Ըստ ցանկացած ամսաթվի, ստանալու և խմբագրելու ոչնչացման ենթակա արխիվային գործերի ցուցակը: Այդ գործերի ոչնչացումից հետո՝ տվյալների բազայում ավարտական ոչնչացման ակտում ընդգրկված արխիվային գործերի ոչնչացված լինելու մասին նշագրում կատարելու գործառույթ:
5.բ Մուտքագրված տվյալների տրամաբանական անհամապատասխանությունների հայտնաբերման և ուղղման համար, օգտատերերի համար նոր ֆունկցիաներ:
5.գ «Արխիվ» համակարգից օգտվելու համար, ըստ մուտքանունների, համակարգից օգտվելու տարբեր թույլտվության աստիճաններ:
5.դ Նոր ծրագրային փաթեթ, տարբեր քր. օրենսգրքերի հոդվածների, նրանց ծանրության աստիճանի ու պահպանման ժամկետների մուտքագրման, և խմբագրման համար:
6. Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև ծրագրային հավելվածների և ֆունկցիաների հավելման և նրանց արդյունքները ծրագրերում ներառելու աշխատանքներ: Մասնավորապես ֆունկցիաներում կավելացվեն՝

6.ա Կարճված, դատարան ուղարկված քրեական վարույթների, չնախաձեռնված քրեական վարույթի նյութերի մուտքագրման և խմբագրման ֆունկցիաներում, նոր ստուգումների բլոկ՝ ոչ ճիշտ տվյալների մուտքագրումը բացառելու համար:
6.բ Արխիվային գործին միաժամանակ մեծ թվով ֆայլերի, ինչպես նաև մեծ ծավալ ունեցող ֆայլերի կցման ծրագրային հավելված:
6.գ Մուտքագրված գործերի արխիվային համարը փոփոխելու բլոկ, պահելով հետագիծը էլեկտրոնային մատյանում:
7. Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև ծրագրային հնարավորությունների ընդլայնման, և նրանց արդյունքները ծրագրերում ներառելու աշխատանքներ: Մասնավորապես կընդլայնվեն՝
7.ա Փնտրման ֆորմաներում, որոնման հնարավորությունները և ստացված ցուցակները տպելու հնարավորությունները:
7.բ Ոչ ճիշտ անվանումներով ֆայլերի կցման արգելափակման հնարավորությունները:
8. Համակարգի տվյալների անվտանգության ապահովման միջոցների (ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող թույլտվությունների սանդղակի) ֆունկցիաների իրագործման ուղեկցում:

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՐԽԻՎ	Վճարման Միավոր դր.	Աշխատանքի գործակից	Գումարը դր.
1	ՀՀ քննչական կոմիտեի կարճված քրեական վարույթների և չնախաձեռնված քրեական վարույթի նյութերի հաշվառման տեղեկատվական բազաների վարման ծրագրային ապահովման ֆունկցիաների իրագործման ուղեկցում:	122142.86	0.86	104806.45
2	Դատարան ուղարկված քրեական վարույթների հաշվառումների ծրագրային ապահովման ֆունկցիաների իրագործման ուղեկցում:	122142.86	0.38	46414.29
3	Տվյալների բազայի արխիվացման, վերականգնման ենթահամակարգի աշխատանքի ուղեկցում:	122142.86	0.46	56146.31
4	Տվյալների բազաներից պահանջվող տեղեկանքների կազմման ծրագրային ենթահամակարգի ֆունկցիաների իրագործման ուղեկցում:	122142.86	0.38	46414.29
5	Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև մշակման և դրանց արդյունքները ծրագրերում ներառելու աշխատանքներ: Մասնավորապես կմշակվեն՝			
5.ա	Ըստ ցանկացած ամսաթվի, ստանալու և խմբագրելու ոչնչացման ենթակա արխիվային գործերի ցուցակը: Այդ գործերի ոչնչացումից հետո՝ տվյալների բազայում ավարտական ոչնչացման ակտում ընդգրկված արխիվային գործերի ոչնչացված լինելու մասին նշագրում կատարելու գործառույթ:	122142.86	1.29	157209.68
5.բ	Մուտքագրված տվյալների տրամաբանական անհամապատասխանությունների հայտնաբերման և ուղղման համար, օգտատերերի համար նոր ֆունկցիաներ:	122142.86	1.23	149723.50

5.գ	«Արխիվ» համակարգից օգտվելու համար, ըստ մուտքանունների, համակարգից օգտվելու տարբեր թույլտվության աստիճաններ:	122142.86	1.16	142237.33
5.դ	**Նոր ծրագրային փաթեթ, տարբեր քր. օրենսգրքերի հոդվածների, նրանց ծանրության աստիճանի ու պահպանման ժամկետների մուտքագրման, և խմբագրման համար:**	122142.86	1.26	154215.21
6	Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև ծրագրային հավելվածների և ֆունկցիաների հավելման և նրանց արդյունքները ծրագրերում ներառելու աշխատանքներ: Մասնավորապես ֆունկցիաներում կավելացվեն՝			
6.ա	Կարճված, դատարան ուղարկված քրեական վարույթների, չնախաձեռնված քրեական վարույթի նյութերի մուտքագրման և խմբագրման ֆունկցիաներում, նոր ստուգումների բլոկ՝ ոչ ճիշտ տվյալների մուտքագրումը բացառելու համար:	122142.86	1.73	211858.76
6.բ	Արխիվային գործին միաժամանակ մեծ թվով ֆայլերի, ինչպես նաև մեծ ծավալ ունեցող ֆայլերի կցման ծրագրային հավելված:	122142.86	1.12	136997.00
6.գ	Մուտքագրված գործերի արխիվային համարը փոփոխելու բլոկ, պահելով հետագիծը էլեկտրոնային մատյանում:	122142.86	1.58	193300.92
7	Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև ծրագրային հնարավորությունների ընդլայնման, և նրանց արդյունքները ծրագրերում ներառելու աշխատանքներ: Մասնավորապես կընդլայնվեն՝			
7.ա	Փնտրման ֆորմաներում, որոնման հնարավորությունները և ստացված ցուցակները տպելու հնարավորությունները:	122142.86	1.00	122024.65
7.բ	Ոչ ճիշտ անվանումներով ֆայլերի կցման արգելափակման հնարավորությունները:	122142.86	1.16	142237.33
8	Համակարգի տվյալների անվտանգության ապահովման միջոցների (ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող թույլտվությունների սանդղակի) ֆունկցիաների իրագործման ուղեկցում:	122142.86	0.38	46414.29
	ԸՆԴ. ԱՐԽԻՎ			1 710 000.00

Հավելված 2*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՐՄՆԻ
մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական ենթահամակարգի /ՄՌԿՏՀ/
սպասարկման, անհրաժեշտ բարեփոխումների կատարման և ուղեկցման աշխատանքների

Ձեռքբերովի ծառայությունների նկարագիր
1 Կադրային հաշվառումների համար, անձնակազմի անհատական տվյալների / հաստիքներ, անձնական գործի բոլոր տվյալներ և այլն/ մշակման գործառույթների

Ֆունկցիաների ուղեկցում
2 Աշխատակիցների տվյալ պահին զբաղեցրած պաշտոնների, աշխատանքային ստաժի վերաբերյալ, Կոմիտեի ներքին անվտանգության վարչությանը տրամադրվելիք տեղեկանքների տրամադրման, ինչպես նաև անհատական իրավական ակտերի հաշվառման էլեկտրոնային մատյանների վարման ֆունկցիաների ուղեկցում
2.1 Անվանացանկի վարման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում
2.2 Ծառայողների թեկնածուների ցուցակների կազմման ֆունկցիաների ուղեկցում
2.3 Թափուր պաշտոնների վերահսկման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում
2.4 Ծառայողների առաջխաղացման ցուցակ կազմման ծրագրային միջոցների ուղեկցում
3 Ի լրումն սպասարկման աշխատանքների ՄՌԿՏՀ-ում կկատարվեն նաև մշակման և նրանց արդյունքները ծրագրերում ներառման աշխատանքներ: Մասնավորապես կմշակվեն՝
3.ա Ծրագրային հավելված՝ թեկնածուների և մրցույթում հաղթող ճանաչացվածներից նոր աշխատակիցների ընտրություն կատարելու համար;
3.բ Նոր հավելվածներ՝ որոնք կապահովեն մրցույթների համր ՝ Թեկնածուների, (ներառված անձնական տվյալները, նրանց համար անցկացվող մրցույթների փուլերի արդյունքները, որևէ փուլից բացակալելը կամ ազատված լինելը, փորձաշրջանի անցկացման ստորաբաժանման տվյալները, և փորձաշրջանի ղեկավարի տվյալները), Մասնագիտացման ղեկավարում, (ներառված են նոր նշանակված քննիչների մասնագիտական ղեկավարների հետ կապված տվյալներ), Ատեստավորում, Վերապատրաստում, Գործուղումներ, Թույլտվության ձև, Մասնակցություն մարտական գործողություններին և այլ անհրաժեշտ ֆունկցիաների աշխատանքը: Այս տվյալներից կստացվեն նաև ելքային փաստաթղթեր:
3.գ Քննչական կոմիտեի կառուցվածքային փոփոխությունների հետ կապված (*ՔԿ Դեպարտամենտը* լուծարվել և ավելացել է ՔԿ *Աջակցող մարմին*), կկատարվել են նոր մշակումներ, ինչը հնարավորություն կտա ՔԿ աշխատակիցներին, ավելի հեշտ եղանակով ձևավորել նոր ավելացված կառուցվածքային ստորաբաժանման բաժինները, նրանց հաստիքները և կատարել հաստիքների համալրում արդեն լուծարված ստորաբաժանման աշխատակիցներից՝ առանց ազատման հրամաններ կատարելու:
3.դ դ/ 1.4 նոր հրամաններ՝ «նշանակում փոխադրման կարգով», «նշանակում մրցույթում հաղթող ճանաչելու հիմքով», «նշանակում ի հաշիվ և պաշտոնակատար», «Տեխ. Սպասարկողներին նշանակել հաստիքին որոշակի ժամկետով», «Աշխատանքային գործունեության կասեցում»: Կառուցվածքային ծառում կներառվի ֆիզ արձակուրդում գտնվողի և այդ հաստիքը ժամանակավորապես զբաղեցնող աշխատակցի տվյալները:
4 Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև ծրագրային հավելվածների և ֆունկցիաների հսվելման և նրանց արդյունքները ծրագրերում ներառման աշխատանքներ: Մասնավորապես ֆունկցիաներում կավելացվեն՝
4.ա Աշխատակցի ստաժի հաշվարկի ֆունկցիա, ըստ տեսակների՝ քննիչ, դատախազ, ընդհանուր և այլն,
4.բ Հրամանների նախագծերի ձևակերպման բաժինը, որտեղ հնարավոր է ձևավորել տարբեր հրամաններ՝ ելքային փաստաթղթի տեսքով,
4.գ Հիշեցումների ֆունկցիաները: Ծրագրի մուտքի ժամանակ կամ ըստ մենյուի համապատասխան կետի, կստացվեն ժամկետների լրանալու վերաբերյալ հիշեցումներ /օրինակ՝ ֆիզ արձակուրդի կամ ժամկետային պայմանագրի ժամկետի ավարտի վերաբերյալ/:
4.դ Պարբերաբար, (ըստ կադրերի վարչության պահանջի) կհավելվեն՝ ըստ ժամանակահատվածի տարբեր ցուցակային տվյալներ ստանալու հնարավորություններ:
5 Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև ծրագրային հնարավորությունների ընդլայնման, և նրանց արդյունքները ծրագրերում ներառման աշխատանքներ: Մասնավորապես կնդլայնվեն՝
5.ա Կառուցվածքային ծառից՝ կտրվի հաշվառման քարտերը ընդլայնված դիտելու հնարավորություն :

5.բ	Աշխատակցի անձնական քարտում կնախատեսվի հնարավորություն՝ կցելու և դիտելու տարբեր տիպի ֆայլեր:
6	Հիշեցումների ենթահամակարգի լրամշակում և ուղեկցում:
7	Ծառայողական վկայականների հետ կապված գործառույթների մշակում և ուղեկցում:

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՐՄՆԻ ՄՌԿՏՀ	Վճարման Միավոր դր.	Աշխատանքի գործակից	Գումարը դր.
1	Կադրային հաշվառումների համար, անձնակազմի անհատական տվյալների / հաստիքներ, անձնական գործի բոլոր տվյալներ և այլն/ մշակման գործառույթների ֆունկցիաների ուղեկցում	166111.11	1.03	171426.67
2	Աշխատակիցների տվյալ պահին զբաղեցրած պաշտոնների, աշխատանքային ստաժի վերաբերյալ, Կոմիտեի ներքին անվտանգության վարչությանը տրամադրվելիք տեղեկանքների տրամադրման, ինչպես նաև անհատական իրավական ակտերի հաշվառման էլեկտրոնային մատյանների վարման ֆունկցիաների ուղեկցում	155000.00	1.72	266600.00
2	Անվանացանկի վարման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում	166111.11	0.43	71427.78
2	Ծառայողների թեկնածուների ցուցակների կազմման ֆունկցիաների ուղեկցում	166111.11	0.43	71427.78
2	Թափուր պաշտոնների վերահսկման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում	166111.11	0.43	71427.78
2	Ծառայողների առաջխաղացման ցուցակ կազմման ծրագրային միջոցների ուղեկցում	166111.11	0.34	56477.78
3	Ի լրումն սպասարկման աշխատանքների ՄՌԿՏՀ-ում կկատարվեն նաև մշակման և նրանց արդյունքները ծրագրերում ներառման աշխատանքներ: Մասնավորապես կմշակվեն՝			
3.ա	Ծրագրային հավելված՝ թեկնածուների և մրցույթում հաղթող ճանաչացվածներից նոր աշխատակիցների ընտրություն կատարելու համար;	166111.11	1.29	214283.33
3.բ	Նոր հավելվածներ՝ որոնք կապահովեն մրցույթների համր ՝ Թեկնածուների, (ներառված անձնական տվյալները, նրանց համար անցկացվող մրցույթների փուլերի արդյունքները, որևէ փուլից բացակալելը կամ ազատված լինելը, փորձաշրջանի անցկացման ստորաբաժանման տվյալները, և փորձաշրջանի ղեկավարի տվյալները), Մասնագիտացման ղեկավարում, (ներառված են նոր նշանակված քննիչների մասնագիտական ղեկավարների հետ կապված տվյալներ), Ատեստավորում, Վերապատրաստում, Գործուղումներ, Թույլտվության ձև, Մասնակցություն մարտական գործողություններին և այլ	166111.11	1.98	328568.89

	անհրաժեշտ ֆունկցիաների աշխատանքը: Այս տվյալներից կստացվեն նաև ելքային փաստաթղթեր:			
3.գ	Քննչական կոմիտեի կառուցվածքային փոփոխությունների հետ կապված (*ՔԿ Դեպարտամենտը* լուծարվել և ավելացել է ՔԿ *Աջակցող մարմին*), կկատարվել են նոր մշակումներ, ինչը հնարավորություն կտա ՔԿ աշխատակիցներին, ավելի հեշտ եղանակով ձևավորել նոր ավելացված կառուցվածքային ստորաբաժանման բաժինները, նրանց հաստիքները և կատարել հաստիքների համալրում արդեն լուծարված ստորաբաժանման աշխատակիցներից՝ առանց ազատման հրամաններ կատարելու:	166111.11	1.33	221426.11
3.դ	դ/ 1.4 նոր հրամաններ՝ «նշանակում փոխադրման կարգով», «նշանակում մրցույթում հաղթող ճանաչելու հիմքով», «նշանակում ի հաշիվ և պաշտոնակատար», «Տեխ. Սպասարկողներին նշանակել հաստիքին որոշակի ժամկետով», «Աշխատանքային գործունեության կասեցում»: Կառուցվածքային ծառում կներառվի ֆիզ արձակուրդում գտնվողի և այդ հաստիքը ժամանակավորապես զբաղեցնող աշխատակցի տվյալները:	166111.11	1.66	275744.44
4	Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև ծրագրային հավելվածների և ֆունկցիաների հավելման և նրանց արդյունքները ծրագրերում ներառման աշխատանքներ: Մասնավորապես ֆունկցիաներում կավելացվեն՝			
4.ա	Աշխատակցի ստաժի հաշվարկի ֆունկցիա, ըստ տեսակների՝ քննիչ, դատախազ, ընդհանուր և այլն,	166111.11	0.95	157141.11
4.բ	Հրամանների նախագծերի ձևակերպման բաժինը, որտեղ հնարավոր է ձևավորել տարբեր հրամաններ՝ ելքային փաստաթղթի տեսքով,	166111.11	1.03	171426.67
4.գ	Հիշեցումների ֆունկցիաները: Ծրագրի մուտքի ժամանակ կամ ըստ մենյուի համապատասխան կետի, կստացվեն ժամկետների լրանալու վերաբերյալ հիշեցումներ /օրինակ՝ ֆիզ արձակուրդի կամ ժամկետային պայմանագրի ժամկետի ավարտի վերաբերյալ/:	166111.11	0.44	73739.32
4.դ	Պարբերաբար, (ըստ կադրերի վարչության պահանջի) կհավելվեն՝ ըստ ժամանակահատվածի տարբեր ցուցակային տվյալներ ստանալու հնարավորություններ:	166111.11	1.48	246031.79
5	Ի լրումն սպասարկման աշխատանքների կկատարվեն նաև ծրագրային հնարավորությունների ընդլայնման, և նրանց արդյունքները ծրագրերում ներառման			

	աշխատանքներ: Մասնավորապես կնդլայնվեն՝			
5.ա	Կառուցվածքային ծառից՝ կտրվի հաշվառման քարտերը ընդլայնված դիտելու հնարավորություն :	166111.11	0.77	128570.00
5.բ	Աշխատակցի անձնական քարտում կնախատեսվի հնարավորություն՝ կցելու և դիտելու տարբեր տիպի ֆայլեր:	166111.11	0.95	157141.11
6	Հիշեցումների ենթահամակարգի լրամշակում և ուղեկցում:	166111.11	1.12	185712.22
7	Ծառայողական վկայականների հետ կապված գործառույթների մշակում և ուղեկցում:	166111.11	0.73	121427.22
	ԸՆԴ. ՄՈՒՏՔ			2 990 000.00

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան 0033, Հ. Հակոբյան 3
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500286323763
ՀՎՀՀ 00001672
էլ. հասցեն՝ info@mergelyan.com
հեռ. 015 27 27 00
տնօրեն՝ Ռ. Հարությունյան

(ստորագրություն)

20.01.23

Հավելված N 2
«24» հունվարի 2023թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏԾ-23/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261180/1	Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	-	392 000	784 000	1 176 000	1 568 000	1 960 000	2 352 000	2 744 000	3 136 000	4 700 000	4 700 000	4 700 000	**4 700 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն)
L.S

ԿԱՏԱՐՈՂ

«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան 0033, Հ. Հակոբյան 3
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500286323763
ՀՎՀՀ 00001672
էլ. հասցեն՝ info@mergelyan.com
հեռ. 015 27 27 00
տնօրեն՝ Ռ. Հարությունյան

(ստորագրություն)

Հավելված 3
«24» հունվարի 2023թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏԾ-23/1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 24 » հունվարի 2023թ. կնքված
«ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՏԾ-23/1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն